Երևան քաղաքի 5-7-րդ դասարանի աշակերտների շրջանում դեղերի անվտանգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների ավարտման մասին

Ավարտվեցին Երևան քաղաքի մի շարք դպրոցներում սույն թվականի ապրիլի 11-ից 20-ն իրականացվող դեղերի անվտանգության և դեղերի հետ ճիշտ վարվելու կանոնների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Աշխատանքները նախաձեռնել և իրականացրել է ՀՀ ԱՆ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ: Նմանատիպ միջոցառումներ իրականցվում են եվրոպական մի շարք երկրների դպրոցահասակ երեխաների շրջանոջմ առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դեղերի միջազգային դիտարկման կենտրոնի կողմից և, Հայաստանը, հանդիսանալով այդ կենտրոնին լիիրավ անդամ, ԱՊՀ երկրներց առաջինը միացել է իրականացվող աշխատանքներին:

Միջոցառումները փորձնական էին և մասնակցեց 5-7-րդ դասարանի 90 աշակերտ: Ստացված արդյունքների վերլուծության հիման վրա կմշակվի նման միջոցառումների իրականացման ծրագիր Հանրապետության մյուս դպրոցներում և այլ տարիքային խմբերում իրականացնելու նպատակով, ինչը կնպաստի ապագա սերնդի դեղակրթական մակարդակի բարձրացմանը:

Հարկ է նշել, որ ՀՀԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվ.ան դեղերի և բժշկականտեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն անդամակցում է ԱՀԿ դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկման միջազգային կենտրոնին դեռևս 1997 թվականից, իսկ 2014 թվականին ընդգրկվել է ԱՀԿ դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկման միջազգային կենտրոնին անդամակցող 20 լավագույն երկրների ցանկում՝ ըստ որակական ցուցանիշների (Uppsala report, April 2014, N 65):